# Քաղաքացիների ընդունելություն

06.03.2018

Մարտի 6-ին Գեղարքունիքի մարզպետարանում մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը և մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Սնակ Խլղաթյանը կատարեցին քաղաքացիների ընդունելություն: Մասնակից 63 քաղաքացիներից 48-ը դիմում էին ներկայացրել ֆինանսական օգնություն ստանալու ակնկալիքով, 6 քաղաքացի՝ աշխատանքի տեղավորման, 3 քաղաքացի հողի սեփականության իրավունքի ձեռքբերման, 2 քաղաքացի՝ առողջարանային ուղեգիր ձեռք բերելու, 2 քաղաքացի՝ բնակարանի կոմունալ խնդիրների կարգավորման, մնացած քաղաքացիները՝ անձնական բնույթի հարցերով: Դիմումների մի մասի պահանջը տեղում բավարարվեց: Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմում հաշվառված մնացած դիմումներին պատասխան կտրվի օրենքով սահմանված ժամկետում: